

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289594 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 11 >> 10 2021թ. 7-13

15452

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սամվել Պետրոսյանի ՄԴ/75395-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ն.Շնորհալու փողոցի 10տան բնակիչ Սամվել Պետրոսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113289594 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը իրավախախտման հետ:

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 49-րդ կետի համաձայն՝ հետընթացն արգելվում է խաչմերուկներում, մերձակա տարածքից ճանապարհ դուրս գալիս և կանոնների 50-րդ կետում թվարկած տեղերում, իսկ 50-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հետընթացն արգելվում է միակողմ երթևեկությամբ ճանապարհներին:



Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցը միակողմանի երթևեկությամբ ճանապարհով տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ (այդ թվում՝ հետընթաց) վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:

Ճանապարհային ոստիկանության ճանապարհային երթևեկության կազմակերպման հսկողության բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն Երևան քաղաքի Զվարթնոց օդանավակայանում՝ իրավախախտումն արձանագրված վայրում՝ ՀՀ կառավարության 26.10.2006թ. №1699-Ն որոշման պահանջներին համապատասխան, տեղադրված է 5.5<<Միակողմանի երթևեկության ճանապարհ >> ճանապարհային նշան, որն առկա է եղել իրավախախտման օրվա դրությամբ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված վայրը նախատեսված է տաքսի ավտոմոբիլների կայանման համար և տեղադրված է 5.18 ճանապարհային նշանը:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը հստակ փաստում է, որ 08.08.2021թ-ին՝ ժամը 08:37-ին դիմումատուն Երևան քաղաքի Զվարթնոց օդանավակայանի հատվածում միակողմ երթևեկությամբ ճանապարհով՝ տրանսպորտային միջոցը վարել է հետընթաց տրանսպորտային միջոցների հոսքերին կահառակ ուղղությամբ:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանը՝ դիմացի մեքենայի խափանված լինելուն և արգելք հանդիսանալուն, ապա իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութում հստակ երևում է, մասնավորապես իրավախախտման վայրը նախատեսված է տաքսի ավտոմոբիլների կայանման համար, տեղադրված է 5.18 ճանապարհային նշանը և դիմացի տրանսպորտային միջոցը ոչ թե խափանված է, այլ տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոց է կահավորված «ՏԱՔՍԻ» գրառմամբ, շախմատաձև դեղին և սև տարբերանշանով:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-ին մասի պահանջը խախտելու համար արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու կարգ սահմանված չէ (դիտավորություն, անզգուշություն և այլն):

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 14-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.08.2021թ. թիվ 2113289594 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սամվել Պետրոսյանին:



**Ե. Կարապետյան**